ա	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	1000
բ	թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2500
գ	այլ արտաքին գովազդի համար՝	500
դ	Դատարկ գովազդային վահանակների համար՝	700
5.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարեկան թույլտվության համար՝	50.000
6.	Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	7500
7.	Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակում՝	5000
8	Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար՝	
ա	բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար՝	350
բ	մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ տարեկան՝	150.000
գ	խանութներում և կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ տարեկան՝	30.000

9	Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին /սաունաներին/ և սաղատներին ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար՝	
ա	Առևտրի օբյեկտների համար՝	30.000
բ	Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	50.000
գ	Բաղնիքների / սաունաների / համար	200.000
դ	Սաղատների կազմակերպման համար	500.000
ե	Շահումով խաղերի կազմակերպման համար	250.000
զ	Վիճակախաղերի կազմակերպման համար՝	100.000
10	Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու տարեկան թույլտվության համար	1.000
11	Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու յուրաքանչյուր միավորի տարեկան թույլտվության համար՝	5.000
12	Համայնքի արխիվից փաստաթղթերի կրկնօրինականներ տրամադրելու համար	2000
Տ Ե Ղ Վ Կ Ա Ն Վ Ճ Ա Ր Ն Ե Ր		
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	10.000
2.	Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձա--կալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների փոխհատուցման վճար՝	3.000
3.	Քաղաքապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար՝	5.000
ա	Այդ թվում՝ գյուղ. նշանակության հողերի վարձակալման մրցույթի մասնակցության վճար՝	2.000
4	Շինարարական և խոշոր եզրաչափի 1 խմ աղբի սեփական ուժերով հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար, այդ թվում՝	1.000
ա	բնակչության համար՝	500
բ	իրավաբանական անձանց համար՝	1500
5	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից դուրս քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում կատարելու վճար՝	10.000

Աշխատակազմի քարտուղար՝

Ն. Քոչարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 Նոյեմբերի 2012 թվականի N 35 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2013 Թ ԴՐՈՒՅՔԱԶԱԹԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ և 20-րդ կետերի պահանջներով՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել 2013թ բյուջետային տարում Ապարանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող քաղաքապետարանի վարչական շենքի և ենթակայության դահլիճների վարձակալության դրույքաչափերը՝ համաձայն N 13 հավելվածի:
2. Հաստատել 2013թ բյուջետային տարում Ապարանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող քաղաքապետարանի վարչական շենքում անվճար տեղակայված կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N 14 հավելվածի:
3. Հաստատել 2013 թ բյուջետային տարում «Ապարանի քաղաքային համայնքի Արվեստի դպրոց» ՀՈԱԿ սաների վարձավճարների դրույքաչափերը և տրվող արտոնությունները՝ համաձայն N 15 հավելվածի:
4. Հաստատել 2013 թ բյուջետային տարում «Ապարանի քաղաքային համայնքի թիվ 1 մանկապարտեզ» և «Ապարանի քաղաքային համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ -ների սաների վարձավճարների դրույքաչափերը և տրվող արտոնությունները՝ համաձայն N 16 հավելվածի:
5. Հաստատել 2013 թ բյուջետային տարում «Ապարանի քաղաքային համայնքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ սաների վարձավճարների դրույքաչափերը և արտոնությունները՝ համաձայն N 17 հավելվածի:
6. Հաստատել 2013 թ բյուջետային տարվա ընթացքում «Ապարանի քաղաքային համայնքի ՄՊԱԿ» ՀՈԱԿ սաների վարձավճարների դրույքաչափերը և տրվող արտոնությունները՝ համաձայն N 18 հավելվածի:
7. Հաստատել 2013 թ բյուջետային տարվա ընթացքում «Ապարանի քաղաքային համայնքի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ սաների վարձավճարների դրույքաչափերը և տրվող արտոնությունները՝ համաձայն N 19 հավելվածի:
8. Համայնքի ղեկավարին՝ ապահովել վարձավճարների 2013 թ դրույքաչափերի հրապարակայնությունը և նորից հաշվարկել աշխատակազմի ուժերը դրանք ժամանակին գանձելու ուղղությամբ:
9. Ուժը կորցրած ճանաչել Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ դեկտեմբերի 8-ի «Ապարանի քաղաքային համայնքում տեղական վարձավճարների 2012 թ դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 52 - Ա որոշումը:

Ավագանի՝ Կողմ (9) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Համլետ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Տիգրան Գեղամյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շախբազյան
Արսեն Պողոսյան



Ղեկավար՝

[Handwritten signature]

Գ. Աբրահամյան

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012 Թ ՂՐՈՒՅՔԱՎԱՓԵՐԸ

	Վարձավճարի անվանումը	ՂՐՈՒՅՔԱՎԱՓԸ (ԴՐԱՄ)
1.	Քաղաքապետարանի վարչական շենքում տարածքները վարձակալության տրամադրման 1 քմ-ի տարեկան վարձավճարի չափը	6000
2.	Դահլիճները օգտագործման տրամադրման վարձավճարի չափը՝ օրեկան՝	20.000

Աշխատակազմի քարտուղար՝

Ն. Քոչարյան

Հավելված N 14

Ապարանի քաղաքային համայնքի ավագանու
29.11.2012 թ N 35– Ա որոշման

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ
ԱՆԿՃԱՐ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Կազմակերպության անվանումը	Մակերես /քմ/
1	ՀՀ ԱԱ ծառայության Ապարանի բաժին	110,4
2	Արխիվի տարածքային բաժին	40,0
3	Արագածոտնի մարզպետի լիազոր ներկայացուցիչ	28,0
4	Պետ նոտարական գրասենյակ	30,8
5	Քրիստոնեադաստիարակության կենտրոն	27,7
6	Գյուլիստրիդատվական կենտրոն	15,8
7	ԵԱՀԿ «Օրիոն» կենտրոն	43,6
8	Վետերանների խորհուրդ	16,2
9	Վետերանների խաղասենյակ	66,6
10	Երկրապահ կամավորների միություն	58,7
		437,8

Աշխատակազմի քարտուղար՝

Ն. Քոչարյան

«ԱՊՐԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ ԱՌՎՈՐՈՂՆԵՐԻ
2013 Թ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

	Մասնագիտության անվանումը	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
1	Դաշնամուրի դասարանում սովորողի ամսական վարձավճարի չափը՝	3500
2	Ջութակի դասարանում սովորողի ամսական վարձավճարի չափը՝	1500
3	Կիթառի դասարաններում սովորողի ամսական վարձավճարի չափը՝	2500
4	Դուդուկ - շվի դասարանում սովորողի ամսական վարձավճարի չափը՝	անվճար
5	Քանոնի դասարանում սովորողի ամսական վարձավճարի չափը՝	անվճար
6	Դիուլի դասարանում սովորողի ամսական վարձավճարի չափը՝	2000
7	Վոկալի դասարանում սովորողի ամսական վարձավճարի չափը՝	2000
8	Կերպարվեստի բաժնում սովորողի ամսական վարձավճարի չափը՝	1500
Արտոնություններ՝		
1	Միջազգային և հանրապետական մրցույթներում դափնեկրի համար	անվճար
2	Ծնողագուրկ երեխայի համար / միակողմանի և երկկողմանի /	անվճար
3	Ընտանեկան անապահովության նպաստառու ընտանիքի երեխայի համար՝	անվճար
4	Հաշմանդամ երեխայի համար՝	անվճար
5	Նույն ընտանիքից 2 երեխաների համար՝	1-ը՝ 50%
6	Նույն ընտանիքից 3 և ավել երեխաների համար՝	1-ը՝ անվճար
7	Միաժամանակ 2 խմբերում ընդգրկված երեխայի համար	1-ը՝ 50%

Աշխատակազմի քարտուղար՝

Ն. Քոչարյան

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՍԱՆԵՐԻ
ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ 2012 Թ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

	Տեղական վարձավճարի տեսակի անվանումը	ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
1	Մեկ երեխայի ամսական վարձավճարի չափը`	3500
Ատոմնություններ`		
1	Նույն ընտանիքից 2 երեխայի դեպքում`	1-ը` 50%
2	Նույն ընտանիքից 3 և ավել երեխաների համար`	1-ը` անվճար
3	Ծնողազուրկ երեխայի համար` / միակողմանի և երկկողմանի /	անվճար
4	Ընտանեկան անապահովության նպաստառու ընտանիքի երեխայի համար`	անվճար
5	Հաշմանդամ երեխայի համար`	անվճար

Աշխատակազմի քարտուղար`

Ն. Քոչարյան

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ ԱՌՎՈՐՈՂՆԵՐԻ
2013 Թ ՎԱՐՉԱՎԵՄԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

	Մասնագիտության անվանումը	ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
		1000
1	Ժողովրդական պարերի բաժին / ուսուցողական խումբ /	1000
2	Ժամանակակից պարերի բաժին / ուսուցողական խումբ /	1000
3	Վոկալի բաժին / ուսուցողական խումբ /	1000
4	Էստրադային բաժին / ուսուցողական խումբ /	անվճար
5	Ազգագրական երգի – պարի բաժին	
Առտոնություններ՝		
1	Ցուցադրական /համերգային/ համույթներում ընդգրկված երեխաների համար՝	անվճար
2	Միջազգային և հանրապետական մրցույթներում դափնեկրի համար	անվճար
3	Ծնողագուրկ երեխայի համար / միակողմանի և երկկողմանի /	անվճար
4	Հաշմանդամ երեխայի համար՝	անվճար
5	Ընտանեկան անապահովության նպաստառու ընտանիքի երեխայի համար՝	1-ը՝ 50%
6	Նույն ընտանիքից 2 երեխաների համար՝	1-ը՝ անվճար
7	Նույն ընտանիքից 3 և ավել երեխաների համար՝	1-ը՝ 50%
8	Միաժամանակ 2 խմբերում ընդգրկված երեխայի համար	

Աշխատակազմի քարտուղար՝

Ն. Քոչարյան

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՊՍԿ» ՀՈԱԿ ԱՌՎՈՐՈՂՆԵՐԻ
2013 Թ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Մասնագիտության անվանումը		ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
		1000
1	Սաների ամսեկան վարձավճարի չափը	
Արտոնություններ`		անվճար
1	Ծնողագուրկ երեխայի համար / միակողմանի և երկկողմանի /	անվճար
2	Հաշմանդամ երեխայի համար`	անվճար
3	Ընտանեկան անապահովության նպաստառու ընտանիքի երեխայի համար`	անվճար
4	Նույն ընտանիքից 2 երեխաների համար`	1-ը` 50%
5	Նույն ընտանիքից 3 և ավել երեխաների համար`	1-ը` անվճար
6	Միաժամանակ 2 խմբերում ընդգրկված երեխայի համար	1-ը` 50%

Աշխատակազմի քարտուղար`

Ն. Քոչարյան

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ ԱՌՎՈՐՈՂՆԵՐԻ
2013 Թ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

	Մասնագիտության անվանումը	ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
1	Սաների ամսեկան վարձավճարի չափը`	1000
	Առտոնություններ`	
1	Միջազգային և հանրապետական առաջնություններում հաղթող երեխաների համար`	անվճար
2	Ծնողագուրկ երեխայի համար / միակողմանի և երկկողմանի /	անվճար
3	Ընտանեկան անապահովության նպաստառու ընտանիքի երեխա	անվճար
4	Նույն ընտանիքից 2 երեխաների համար`	1-ը` 50%
5	Նույն ընտանիքից 3 և ավել երեխաների համար`	1-ը` անվճար
6	Միաժամանակ 2 խմբերում ընդգրկված երեխայի համար	1-ը` 50%

Աշխատակազմի քարտուղար`

Ն. Քոչարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
ք. Ապարան, Բաղրամյան 26, հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 Նոյեմբերի 2012 թվականի N 36 - Ա

ԱՊՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի, պահանջներով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, նպատակ ունենալով՝ համայնքի տարածքում կանոնակարգելու աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպումը, ապահովելու աղբահանության պատշաճ կազմակերպման իրավական երաշխիքներն ու պատասխանատվության մեխանիզմները, ելնելով համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման գործում պատասխանատուների, ֆիզիկական և իրավաբանական անձանց գործառույթները կանոնակարգելու անհրաժեշտությունից՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները 2013 թ հունվարի 1-ից իրականացնել «Ապարանի քաղաքային համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ միջոցով:
2. Հաստատել Ապարան քաղաքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել աղբահանության վարձավճարների նորմաները՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Համայնքի ղեկավարին՝
ա/ Բաստատել համայնքի վարչական տարածքում գտնվող իրավաբանական անձանց կողմից գոյացրած աղբի քանակի և աղբահանության վարձավճարների չափերը:
ա/ Բաստատել աղբի հավաքման և փոխադրման ժամանակացույցն ու երթուղիները, համայնքի աղբահանության քարտեզները:
5. Մույն որոշմամբ հաստատված կարգի մասին տեղական հեռուստատեսության և հանդիպումների միջոցով իրազեկել համայնքի բնակչությանը, բոլոր սուբյեկտներին:
6. Մույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Կոմունալ ծառայության տնօրեն Ս. Սեդրակյանի վրա:
Կոմունալ ծառայության տնօրեն Ս. Սեդրակյանին՝ ձեռնարկել անհրաժեշտ աշխատանքներ՝ ծառայության գործունեությունը պատշաճորեն կազմակերպելու ուղղությամբ:
Մինչև տարեկան բոլոր բնակիչների և սուբյեկտների հետ կնքել աղբահանության պայմանագրեր:
7. Որոշման կատարման ընդհանուր հսկողությունը դնել քաղաքապետի տեղակալ Գ. Երեմյանի վրա:
8. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Ավագանի՝

Կողմ (9)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Համլետ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Տիգրան Գեղամյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝

Գ. Աբրահամյան

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐԲԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱԽՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

- 1.1. Սույն կարգով կարգավորվում են համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
- 1.2. Սույն կարգի գործողությունը տարածվում է համայնքի ղեկավարի, ավագանու, աղբահանության կազմակերպման պատասխանատուների, համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական անձանց, համայնքի բնակիչների, ժամանակավոր բնակիչների, աղբահանության ծառայություն մատուցվող անձանց վրա:
- 1.3. Սույն կարգի գործողության ժամկետ է սահմանվում՝ 4 տարին:
- Կարգի ենթակա է վերանայման ելնելով համայնքի առաջ ծառացած խնդիրներից և աղբահանության ոլորտում ձևավորված հարաբերություններից, սակայն ոչ ուշ, քան կարգի գործողության ժամկետի (չորս տարին) լրանալը:

2. ՍԱՅՄԱՆՈՒՄՆԵՐ

- 2.1. Համայնքի վարչական տարածքում սույն կարգի կիրառման առումով «աղբ» հասկացությունն ընդգրկում է համայնքի բնակչության կենցաղային կարիքները հոգալու արդյունքում առաջացած և կազմակերպությունների ու առևտրի օբյեկտների արտադրած, իրենց կազմով, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկանիշներով բնակչության կողմից կենցաղային կարիքները հոգալու արդյունքում արտադրած թափոններից չտարբերվող այն մնացորդները, որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները: Այն իր մեջ ներառում է՝ սննդի, կենդանական և բուսական ծագման բոլոր մնացորդները, ներառյալ՝ մրգերի, բանջարեղենի, մսեղենի, ձկնեղենի, կաթնեղենի և այլ մնացորդներ, ստվարաթղթի տուփերը, թղթե փաթեթավածքի և փաթեթավորման նյութերը, ջրերի, հյուսքերի, մաքրող ու լվացող նյութերի, շամպունների և այլնի պլաստիկ շշերը, տարաներն ու տոպրակները, պլաստիկ նյութերը, ամանները, դուլները և այլ մնացորդներ, ապակյա շշերը, տարաները, այլ ապակյա իրեր, պահածոների, յուղի, ձեթի և այլ մետաղյա տարաները, կաշվե և ռետինե մնացորդները, փայտե մնացորդներ և այլն:
- 2.3. Աղբի տեղադրման վայր (հատուկ հատկացված տեղեր) - այնպիսի վայրեր, որտեղ համայնքի ղեկավարի թույլտվությամբ տեղադրված են աղբարկղեր/աղբամաններ և որը աղբահանության կազմակերպմամբ զբաղվող անձանց հնարավորություն է տալիս պատշաճ հավաքել և տեղափոխել աղբը:
- 2.4. Փաստացի գործող աղբավայր՝ աղբավայր, որի շահագործման համար չկա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվություն, սակայն որը փաստացի շահագործվում է որպես աղբավայր և վերահսկվում է տեղական ինքնակառավարման մարմինի կողմից:

3. ԱՐԲԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄ

- 3.1. Աղբի հավաքման, հեռացման, փոխադրման, պահման, աղբավայրերի շահագործման հսկողությունը պետք է իրականացնի համայնքի ղեկավարը՝ համայնքի կոմունալ ծառայության միջոցով, որի գործունեությունը նպատակաուղղված է համայնքի բնակչության հանրային առողջության, անվտանգության և բարեկեցության պահպանմանը, թափոնների բացասական ներգործությունից շրջակա միջավայրի պահպանությանը, թափոնների գործածության վերաբերյալ հասարակության էկոլոգիական, տնտեսական և սոցիալական շահերի զուգակցմանը:
- 3.2. Համայնքի ղեկավարությունը հետևողական աշխատանքներ է տանում հանրության հետ՝ համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման աշխատանքների հետագա շարունակական գործընթացների, բնագավառը կարգավորող իրավական ակտերի, բնակչության իրավունքների ու պարտականությունների մասին:
- 3.3. Համայնքի ղեկավարը սահմանում է այն պաշտոնատար իրավասու անձանց ցանկը, ովքեր պատասխանատու են աղբահանության կազմակերպման աշխատանքների համար և ուն քաղաքի բնակիչներն ու իրավաբանական անձինք կարող են դիմել, պատվիրել, առաջադրվել, առաջադրվել առաջված հողորդուններին, բողոքներին, նամակներին:
- 3.5. Բոլոր այն անձինք, ովքեր համեմարարում են տեղափոխել աղբը, պարտավոր են վճարել դրա դիմաց համայնքի ավագանու կողմից սահմանված նորմաներով:

4. ԱՐԲԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. Չի թույլատրվում՝
- 4.1.1. Աղբի համար նախատեսված վայրերում տեղադրելու անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր ու թափոններ:
- 4.1.2. Աղբի համար նախատեսված վայրում տեղադրելու սատկած կենդանու մարմին:
- Սատկած կենդանու մարմինը պետք է արագորեն հեռացվի քաղաքի՝ առողջապահության պատասխանատուի ցուցումով: Եթե սատկած կենդանու տերը հայտնի է, ապա հեռացումն իրականացվում է նրա կողմից, իսկ եթե տերը հայտնի չէ, ապա՝ քաղաքապետարանի պահանջով՝ աղբահանություն իրականացնողի կողմից:
- 4.1.3. Նետել կամ տարածել աղբը փողոցում, պուրակում, այգում, մայրերին, ջրանցքներում, գետերներին և այլ ջրային ավազաններում կամ քաղաքի այլ հասարակական վայրերում: Յուրաքանչյուր ոք պետք է լցնի աղբը նախատեսված աղբարկղերում այնպես, որ այն չտարածվի և չաղտոտի շրջակայքը:

- 4.1.4. Ավել, շուռ տալ, ջրել կամ այլ միջոցով ուղղել աղբը հասարակական և մասնավոր վայրերից դեպի որևէ առու, մայթ, սյգի, պուրակ, փողոց կամ քաղաքի այլ հասարակական վայր:
- 4.1.5. Անփականության իրավունքով իրեն պատկանող տարածքում, փողոցում, մայթերի վրա, պուրակում, այլ հանրային տարածքներում առանց համապատասխան թույլտվությունների այրել կուտակված աղբը:
- 4.1.6. Իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ տեղափոխել, հեռացնել աղբը, քան այն անձինք, ովքեր ունեն աղբահանության ծառայությունների մատուցման կնքած պայմանագրեր:
- 4.2. Անփականություն ունեցող կամ զբաղեցնող մարդիկ պետք է աղբից մաքուր պահեն իրենց բնակության, հանգստի, աշխատավայրի և կենսագործունեության այլ վայրերին հարակից տարածքները՝ ջրանցքը, առուն, մայթը, այգին, պուրակը, փողոցը, աղբի կուտակման, հավաքման վայրը և այլն:
- 4.3. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մաքուր և սահմանված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան պահել քաղաքի ցանկացած հանրային տարածք և չպետք է պատճառ հանդիսանա հանրային տարածքներում աղբի՝ չնախատեսված վայրերում թափման, կուտակման և պահման համար:
- 4.4. Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են աղբահանող կազմակերպությանը ծանուցել աղբի հեռացման միանգամյա ծառայություն մատուցելու անհրաժեշտություն մասին, որը կհամարվի առանձին ծառայություն և որի համար կկնքվի առանձին պայմանագիր:

5. ԱՐԲԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

- 5.1. Համայնքի ղեկավարի աղբահանության կազմակերպման և վերահսկողության ֆունկցիաները՝
- համայնքն արտոնագրում, վերահսկում կամ լուծարում է աղբավայրերը,
 - սահմանում է աղբահանության կազմակերպման, սանիտարական մաքրման սխեմաները,
 - որոշում է աղբահանության կազմակերպման քաղաքականությունը,
 - սահմանում է ծառայության մատուցման նվազագույն և առավելագույն վճարները,
 - որոշում է համայնքի աղբահավաքման քարտեզը և տեղափոխման ուղղությունները,
 - որոշում է աղբարկղերի/աղբամանների չափերը, կշիռը, գույնը և դրանց ներկայացվող այլ պահանջները,
 - իրականացնում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի պահանջներից բխող վարչական ակտերի ընդունման և վարչական պատասխանատվության ենթարկելու գործառույթներ:
 - զբաղվում է շրջակա միջավայրի պահպանության, հանրության առողջության և անվտանգության ապահովման ուղղությամբ բնակչության իրազեկման բարձրացման խնդիրներով, հետևողականորեն իրականացնում է հանրության բնապահպանական գիտլիքների բարձրացման, համայնքի կողմից ընդունվող ռազմավարական և պլաններին ու որոշումներին բնակչության ակտիվ մասնակցության աշխատանքներ:
- 5.2. Համայնքն իրավասու է անձամբ՝ իր համայնքային բյուջետային հիմնարկի միջոցով իրականացնել աղբահանության կազմակերպումը համայնքում՝ վերջիններիս հետ կնքելով համապատասխան պայմանագրեր:
- Քաղաքացիները և իրավաբանական անձինք իրավասու են կնքել պայմանագրեր կազմակերպության հետ, որն ունի աղբահանության կազմակերպման թույլտվություն:
- 5.3. Համայնքի կողմից աղբահանության կազմակերպման թույլտվությունը տրվում է այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, ովքեր ունեն համապատասխան գույք, տեխնիկական միջոցներ, ֆինանսական և մարդկային ռեսուրս:
- 5.4. Համայնքի կողմից թույլտվություն կարող է տրվել նաև աղբը ինքնատեղափոխող անձանց, որոնք պարտավոր են պահպանել սույն կարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները:

6. ՀԱՍՄԱՅՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

- 6.1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ՝ օրենսգրքի 43.1/3,4,5,6 հոդվածների համաձայն՝ աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը, չսահմանված և չնախատեսված տեղերում ու վայրերում՝ աղբ թափելը, առանց աղբահանության պայմանագրի աղբը հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված տեղում (տեղից) դուրս աղբը հեռացնելը (թափելը) առաջացնում է տուգանքի նշանակում՝ օրենսգրքի նշված հոդվածներով սահմանված չափով և օրենքով սահմանված կարգով:
- 6.2. Համայնքի վարչական տարածքում աղբահանության կազմակերպման ոլորտում թույլ տված վարչական իրավախախտումը կարող է առաջ բերել վարչական տույժի կիրառում, մասնավորապես՝ տուգանքի նշանակում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված չափով ու կարգով:
- 6.3. Ապարանի քաղաքային համայնքում գտնվող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև այլ համայնքների բնակիչները ենթակա են վարչական պատասխանատվության Ապարան քաղաքի համայնքի բնակիչների հետ համահավասար՝ ընդհանուր հիմունքներով:

7. ԵԶՐԱՓՈԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 7.1 Սույն կանոնները կարող են փոփոխվել, լրացվել, խմբագրվել միայն համայնքի ավագանու որոշմամբ:
- 7.2 Սույն կարգը ուժի մեջ է մտնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտոնական հրապարակման պահից:

Աշխատակազմի քարտուղար՝


Ն. Քոչարյան

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

1	1 խմ աղբի հեռացման վարձավճարի չափը	1500 դրամ
2	Շինարարական /այլ կոչտ/ 1 խմ աղբը սեփական ուժերով հեռացնելու թույլտվության վճար	
-	Այդ թվում՝ բնակչության համար՝	500 դրամ
-	իրավաբանական անձանց համար՝	1500 դրամ
3	Շինարարական և այլ կոչտ աղբը ծառայության ուժերով հեռացնելու թույլտվության վճար	2500 դրամ
4	Բնակչությունից զանձվող վարձավճարի չափը՝ ամսեկան	1 շնչին՝ 100 դրամ, ոչ ավելի 500 դրամից

Աշխատակազմի քարտուղար՝

Ն. Քոչարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2012 թվականի N 37 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ
ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և 38-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ դասական աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 1341 քմ հողատարածքը:

2. Հաստատել հողատարածքների օտարման մեկնարկային գինը և հավելաճի քայլը՝

N	Հողատարածքի հասցեն	Ծածկա- գիր	Մակերես /քմ/	Մեկնարկ գինը՝ ՀՀ դրամ	1 լոտի նախավճար 5 %	Հավելաճի քայլ-դրամ	Նպատակային նշանակությունը և հողատեսքը	Գործառնական նշանակությունը
1	Բաղրամյան վերջ	ԲՓ - 3	1341	544000	27200	30000	գյուղատնտեսակա	արոտ

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ - վաճառքի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝

Կողմ (9)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Համլետ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Տիգրան Գեղամյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան



Համայնքի ղեկավար՝

[Signature]

Գ. Աբրահամյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԱՆԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 Նոյեմբերի 2012 թվականի N 38 - Ա

ԱՊԱՐԱՆ ԲԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԸ
ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապարան քաղաքի բնակիչ Արմեն Գևորգյանը մուծելով իր ավտոմեքենայի 4 տարվա գույքահարկի
ապառք 660.000 դրամ գումարը՝ դիմել և խնդրել է զիջելու գույացած 84646 դրամ տույժը:
Հաշվի առնելով քաղաքացի Արմեն Գևորգյանի դիմում-խնդրանքը, հիմք ընդունելով՝ «Գույքահարկի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝


1. Զիջել քաղ. Արմեն Գևորգյանի ավտոմեքենայի գույքահարկի տույժը՝ 84646 դրամի չափով:

Ավագանի՝ Կողմ (9) Դեմ (0) Չեղմպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Համլետ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Տիգրան Գեղամյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝

Գ. Աբրահամյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2012 թվականի N 39 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆՈՒՇԱԿԱՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ
ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հաշվի առնելով Ապարան քաղաքի բնակիչ Անուշավան Անդրեասյանի ընտանիքի սոցիալական վիճակը
և նրա դիմում-խնդրանքը, հիմք ընդունելով՝ «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղ. Անուշավան Անդրեասյանի ավտոմեքենայի գույքահարկը 22500 դրամի չափով:

Ավագանի՝	Կողմ (9)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
----------	------------	-----------	---------------

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Համլետ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Տիգրան Գեղամյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան



Համայնքի ղեկավար՝

Գ. Աբրահամյան